

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. հոկտեմբերի 29-ից 31-ը ժնն (Շվեյցարիայի Համադաշնություն)՝ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Վարդան Մելիքյանի գործուղման վերաբերյալ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Վարդան Մելիքյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Ժնն (Շվեյցարիայի Համադաշնություն)

2019թ. հոկտեմբերի 29-ից 31-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպություն:

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն՝ Բարձր լեռնային շրջանների գագաթաժողովին (High Mountain Summit):

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Բարձր լեռնային շրջանների գագաթաժողովի ընթացքում անդրադարձ կատարվեց ջրային ռեսուրսների, բնական աղետների կառավարման հետ կապված հասանելի, հուսալի և քաղաքականություններին համապատասխան տեղեկատվության անհրաժեշտությանն առնչվող հարցերին, որոնք կապված էին բարձր լեռնաշղթաներում և էկոհամակարգերի փոփոխությունների հետ՝ նպատակ ունենալով տեղեկացնել, ինչպես նաև նպաստել լեռների կայուն զարգացմանը:

Հանդիպման նպատակն էր ստեղծել հարթակ ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում միջգերատեսչական փոխգործակցությունը խթանելու և ամրապնդելու համար, որոնք կիրականացվեն ոլորտների մասնագետների միջոցով՝ կիրառելով առկա և պլանավորված նախաձեռնություններն ու նախագծերը:

Գագաթաժողովի հիմնական նպատակն էր՝

- բարձր լեռնային շրջաններում կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանն ուղղված առաջնահերթությունների և ներդրումների բազմակողմանի միջոլորտային մոտեցման մշակումը,

- որոշել հիդրոլոգիական, օդերևութաբանական, կլիմայական և կանխատեսումային ծառայությունների մատուցման բարելավման գործնական քայլերը, կրիոսֆերային և ալպյան տարածաշրջանների դիտարկումների օպտիմալացման և տվյալների հասանելիության չափանիշների ընդլայնումը, ինչպես նաև ուղղությունների զարգացմանն ուղղված գիտական հետազոտությունների խթանման ուղիները.
- որոշել կլիմայական ռիսկերի և լեռնային շրջաններին բնորոշ սպառնալիքների նախագգուշացման համակարգեր հիմնելու ճանապարհային քարտեզներն, այդ թվում անդրսահմանային տարածքները, ներառելով էքստրեմալ երևույթները, սառցադաշտային լճերի ճեղքվածքի հետևանքով առաջացած վարարումները, ձնահյուսերը, փոթորիկները, մթնոլորտի աղտոտումը և այլն:
- կառավարման բոլոր մակարդակներում գիտության և քաղաքականության ներկայացուցիչների միջև սերտ և կանոնավոր շփումների խթանմանն աջակցումը:

Բարձր լեռնային շրջանների գազաթնաժողովի ընթացքում անց են կացվել թեմատիկ նիստեր հետևյալ թեմաններով՝

- Գործողությունների իրականացման հիմնավորում,
- Շահառուներ և կարիքներ,
- Հնարավոր խնդիրների վերացում,
- Դիտարկումների և տվյալների հասանելիության բարձրացում,
- Հետազոտություն և նորարարություն:

7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՀՕԿ) բարձր լեռնային շրջանների գազաթնաժողովին մասնակցությունը հնարավորություն տվեց հանդիպել տարբեր միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, մասնավորապես ՀՕԿ-ի, ՀԲ-ի, Շվեյցարիայի ազգային օդերևութաբանական ծառայության հետ:

ՀՕԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ելենա Մանաենկովայի հետ հանդիպման ընթացքում քննարկվեց Հայաստանի մասնակցությունը ՀՕԿ-ի տարբեր գիտատեխնիկական ծրագրերում, ինչպիսիք են «Տարերային աղետների վաղ ահազանգման համակարգեր»-ը, «Կլիմայի վերաբերյալ տեղեկատվություն և ծառայություններ»-ը, «Դիտարկումների տվյալների ինտեգրացման գլոբալ համակարգ»-ը, «Տեխնիկական համագործակցության ծրագիր»-ը և բազմաթիվ այլ հարցեր: Տ-ն Մանաենկովան ներկայացրեց ՀՕԿ-ի նոր կառուցվածքը և ռազմավարական ծրագիրը, առաջարկեց առավել ակտիվ ներգրավվել Համաշխարհային մթնոլորտային ծրագրի տարբեր նախաձեռնություններում:

Համաձայություն ձեռք բերվեց հիմք ընդունել ՀՕԿ-ի վեհաժողովի 18-րդ նստաշրջանին հաստատված ՀՕԿ-ի ռազմավարական ծրագիրը՝ ազգային հիդրոօդերևութաբանական ազգային ռազմավարական ծրագիրը մշակելիս: ՀՕԿ-ը պատրաստականություն հայտնեց նաև փորձագետներ գործուղել Հիդրոմետ

ծառայություն՝ կլիմայական, հիդրոլոգիական և օդերևութաբանական ոլորտներում փորձագիտական աջակցություն տրամադրելու նպատակով:

Միջոցառման շրջանակներում հանդիպում ունեցա Շվեյցարիայի ազգային օդերևութաբանական ծառայության ղեկավարի հետ, որի ընթացքում քննարկվեց երկկողմանի համագործակցության հաստատման հնարավորությունը:

Նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց մասնագետների փոխայցելություններ կազմակերպել՝ ազգային օդերևութաբանական ծառայությունների գործունեությանը տեղում ծանոթանալու և հետագայում լավագույն փորձի ներդրման նպատակով:

Հանդիպում եմ ունեցել նաև ՀՕԿ-ի «Կլիմայական ծառայությունների գլոբալ շրջանակ» (GFCS) գրասենյակի տնօրենի և ՀԲ-ի համապատասխան ներկայացուցչի հետ: Քննարկվեց Հայաստանում կլիմայական ծառայությունների ազգային համակարգ ներդնելու հնարավորությունը:

Ագրոօդերևութաբանական վարչության տնօրենի հետ նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց՝ հիմնելու Երաշտի մոնիթորինգի տարածաշրջանային վիրտուալ կենտրոն Հիդրոմետ ծառայությունում: Քննարկվեց Երաշտի կառավարման ազգային քաղաքականություն մշակելու հարցը՝ հիմք ընդունելով ՀՕԿ-ի կողմից մշակված համապատասխան ուղեցույցը:

8. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանդիպման շրջանակներում ընդունվեց փաստաթուղթ, որը կոչ է անում անցնել գործողությունների, ուղղված լեռնային տարածաշրջաններում եղանակի, կլիմայի, ձյան, սառույցի և ջրի հետ կապված ճգնաժամների կանխարգելմանը: Փաստաթղթով Գազաթաժողովը կոչով դիմում է բոլոր կառավարություններին վերանայելու իրենց քաղաքականությունն, ուղղված լեռնային շրջանների զարգացմանը և լեռնային էկոհամակարգերի պահպանմանը, նպատակ ունենալով, որ լեռները շարունակեն մնալ աշխարհի ջրի առաջացման համակարգեր, և այդ նպատակներին հասնելու համար ամրապնդել միջսահմանային համագործակցությունը՝ տվյալների և կանխատեսումների բաց փոխանակման ճանապարհով:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

 Recoverable Signature

X 

ՎԱՐԴԱՆ ՄԵԼԻԿՅԱՆ

Signed by: MELIKYAN VARDAN 1901820505

Վարդան Մելիքյան